Հավելված 1

2021-2022 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում, ըստ բակալավրի և մագիստրատուրայի աշխատանքային ուսումնական պլանների, նախատեսված է եղել **40 պրակտիկա** (*տասնչորս ուսումնական* - 8՝ առկա, 6՝ հեռակա, *տաս արտադրական (մանկավարժական)* - 7՝ առկա, 3՝ հեռակա, *տասնչորս մասնագիտական* - 10՝ առկա, 4՝ հեռակա, *երկու գիտամանկավարժական* – հեռակա):





Ուսանողների պրակտիկայի կազմակերպման համար հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղը պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ ունեցել է 11 հուշագիր, 1 համաձայնագիր և 35 պայմանագիր, որոնցից *4 պայմանագիր (*Իջևանի Սպ.Սարգսյանի անվան N1 հիմնական դպրոց, Իջևանի Մ.Մարտիրոսյանի անվան N5 հիմնական դպրոց, Իջևանի N4 հիմնական դպրոց, «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ), *3 համագործակցության հուշագիր* (ՀՀ Կենտրոնական բանկ, «Հայաստանի հաշվապահների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն, Բերդի բազմագործառութային պետական քոլեջ) ստորագրվել է 2021-2022 ուսումնական տարվա ընթացում:

Պրակտիկաները կազմակերպվել են ըստ ժամանակացույցի, մասնագիտական ամբիոնների կողմից նախապես պրակտիկայի բաժին ներկայացված ծրագրերով, արտահայտվել են դասացուցակում:



Ուսումնական պրակտիկաները կազմակերպվել են առկա եղանակով՝ պահպանելով հակահամաճարակային կանոնները (մասնաճյուղում և մեկ օր տնողությամբ երթուղային եղանակով), առաջին կիսամյակում համավարակով պայմանավորված նաև առկա և առցանց ձևերի համադրմամբ: Մասնակցել է 163 ուսանող:

«Պատմություն» կրթական ծրագրի առկա ուսուցման 2-րդ կուրսում և հեռակա ուսուցման 3-րդ կուրսում ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողներն ուսումնասիրել և ներկայացել են ՀՀ մարզերի և Արցախի Հանրապետության հնագիտական և պատմամշակութային հուշարձանները, հավաքագրել, համակարգել, վերլուծել են ուսումնական պրակտիկայի ընթացքում նախատեսված պատմամշակութային վայրերի մասին տեղեկությունները, ծանոթացել են դրանց առանձնահատկություններին, կատարել են անհատական և խմբային աշխատանքներ: Պրակտիկայի ընթացքում առկա ուսուցման ուսանողներն այցելություն են կատարել Լոռու մարզ:

«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի առկա ուսուցման 1-ին կուրսում «ուսումնական պրակտիկա-1»-ի շրջանակներում կատարվել են այցելություններ ՀՀ Տավուշի մարզի, Գյումրու և Երևանի զբոսաշրջային տարբեր դեստինացիաներ (մարզային և մայրաքաղաքային պատմամշակութային օբյեկտներ՝ եկեղեցիներ, թանգարաններ, զբոսաշրջային ինդուստրիան սպասարկող կազմակերպություններ, տարածական օբյեկտներ): Տավուշի մարզի, Երևան և Գյումրի քաղաքների օրինակով ներկայացվել են թանգարանների, բնական և պատմամշակութային հուշարձանների, ենթակառուցվածքների դերը զբոսաշրջության մեջ: Հեռակա ուսուցման 2-րդ կուրսում «ուսումնական պրակտիկա-1»-ը իրականացվել է Տավուշի մարզի շրջանակում:

«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի առկա 2-րդ և հեռակա 3-րդ կուրսերում «ուսումնական պրակտիկա-2»-ի շրջանակներում կատարվել են այցելություններ ՀՀ Տավուշի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի, Վայոց ձորի մարզեր, զբոսաշրջային տարբեր դեստինացիաներ (մարզային և մայրաքաղաքային պատմամշակութային օբյեկտներ՝ եկեղեցիներ, թանգարաններ, զբոսաշրջային ինդուստրիան սպասարկող կազմակերպություններ, տարածական օբյեկտներ):

Ուսումնական պրակտիկայի շրջանակներում «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ուսանողները հավաքել և վերլուծել են տարածքի զբոսաշրջային ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվություն և փաստերի վերլուծության հիման վրա կատարել եզրահանգումներ ռեսուրսների օգտագործման առկա վիճակի և դրանց օգտագործման հեռանկարային գործընթացների վերաբերյալ, ինչպես նաև տեղում որպես զբոսավար ներկայացրել համապատասխան օբյեկտները, կատարել երթուղու կանգառների զբոսաշրջային գրավչության գնահատում:

«Հոգեբանություն» կրթական ծրագրի հեռական ուսուցման 4-րդ կուրսի ուսումնական պրակտիկան իրականացվել է «Հույսի կամուրջ» ՀԿ Իջևանի երեխայի զարգացման կենտրոնում: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ծանոթացել են կենտրոնի գործունեությանը, իրականացրել են տեսական նյութի կիրառում գործնականում, կատարվել է հոգեբանական հետազոտության կազմակերպման, տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության և մեկնաբանման աշխատանքներ, երեխայի հոգեբանամանկավարժական կարիքների դիտարկում, դեպքի վերլուծություն՝ ըստ երեխաների նկարագրության, անհատական և խմբային պարապմունքների դիտարկում և վերլուծություն: Իրականցվել է զարգացման տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ հոգեբանի աշխատանքի վերլուծություն:

«Դիզայն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողները առաջին կիսամյակի ուսումնական պրակտիկայի ընթացքում կատարել են ճարտարապետական կառույցի արտաքին հարդարանքի վերաձևափոխություն /էքստերիեր/ մշակել գույնի, ծավալի և ֆակտուրայի լուծումներով, կատարել ճեպանկարների վերարտադրություն ու մշակում գրաֆիկական դիզայնի ծրագրերի և դրանց գործիքակազմի կիրառման միջոցով /2Ds, 3D/: Երկրորդ կիսամյակի ուսումնական պրակտիկան

ընթացքում ուսանողները ծանոթացել են ապակենկարչությանը, կատարել տեխնիկայի վերաբերյալ հետազոտություն և ըստ տեխնիկական մոտեցումների ներկայացնել դրանց տիպերն ու տեսակները, զարգացրել տարբեր նյութեր միմյանց միքսելու խնդրի լուծման, տեխնիկապես նորովի մոտեցման միջոցները գործնականում վարպետորեն կիրառելու կարողություններ:

Պրակտիկայի ընթացքում կազմակերպվել է այցելություն «Chibukhchyans'art studio»՝ ուսանողներին ծանոթացնելու վիտրաժային արվեստի առանձնահատկություններին և արտադրական գործունեության կազմակերպչական գործընթացներին:

Պրակտիկայի ընթացքում յուրաքանչյուր ուսանող ներկայացրել է դեկորատիվ բնապատկերների պարզ և բարդ կոմպոզիցիոն լուծումներով կատարված երկու աշխատանք՝ վիտրաժի տեխնիկական և նկարչական միջոցների կիրառմամբ: Աշխատանքներից մեկը հանձնվել է ամբիոն:

«Դիզայն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողները ուսումնական պրակտիկայի ընթացքում կատարել են դիզայնի գրաֆիկական լուծումների ընտրություն և ստեղծագործական մոտեցում ըստ ճարտարապետական կառույցի թեմատիկ թելադրանքի՝ լոգո, այցեքարտ, մուտքի քարտ, վկայական, բուկլետ: Գործնական առաջադրանքներն իրականացվել են գրաֆիկական դիզայնի համակարգչային ծրագրերի գործիքակազմի միջոցով /2D, 3D 7 Coreldraw, Photoshop/:

«Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի ընթացքում առաջին կիսամյակում ուսանողները հենքային գործվածքների ուսումնասիրման արդյունքում ստեղծել են գոբելենային գործվածքներ /հաշվարկային գոբելեն/, իսկ երկրորդ կիսամյակում ուսումնասիրել են ոչ հենքային կապավոր գործվածքների տեխնիկական հնարավորությունները, ստեղծել գծապատկերներ, առաջադրանքների տեխնիկական հնարավորությունների հիման վրա զարդապատկերային հաշվարկի ճշգրիտ կատարմամբ ներկայացրել ստեղծագործական երկու աշխատանք, որոնցից մեկը հանձնվել է ամբիոն:

Պրակտիկայի ընթացքում կազմակերպվել են այցելություններ «Թելիկ» և «Չիբուխչյան» արվեստի կենտրոններ՝ ուսանողներին ծանոթացնելու դեկորատիվ-կիրառական արվեստի արտադրական գործունեության առանձնահատկություններին և կազմակերպչական գործընթացներին:

Հեռակա ուսուցման «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկայի ընթացքում ըստ ծրագրի ուսանողները ծանոթացել են ծաղկային ձևավորման հիմնական տեսակներին, ծաղկային ձևավորումներում օգտագործվող միամյա, երկամյա և բազմամյա ծաղկաբույսերի կիրառությանը տարբեր ծաղկային կոմպոզիցիաներում, ջերմատնային և սենյակային գեղազարդ բույսերին, ծառաբույսերի գեղազարդ ձևերին և էտման աշխատանքներին, ծառաբույսերի արհեստական ձևափոխություններին, ներքաղաքային և մերձքաղաքային տնկարկներին, կանաչապատման մեջ օգտագործվող ծառերին ու թփերին, գեղազարդ բուսականության հիմնական վնասատուներին ու հիվանդություններին, հատուկ պահպանվող տարածքներին:

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական պրակտիկաների արդյունքների ամփոփմամբ առկա ուսուցման բոլոր ուսանողները ստացել են «ստուգված», հեռակա ուսուցման արդյունքներով ստուգարքի չի ներկայացել 4 ուսանող: Տարբերություն են հանձնել առկա ուսուցման «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի 3 ուսանող, հեռակա ուսուցման «Բնապահպանություն և բնօգտագործում» կրթական ծրագրի 1 ուսանող: Ակադեմիական պարտք է հանձնել «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի 2 ուսանող:

Հավելված 1



Ուսումնական պրակտիկաների վերաբերյալ պրակտիկայի բաժնի կողմից առաջարկվում է՝

- մասնագիտական ամբիոնների կողմից ներկայացվող ծրագրերում առաջնային համարել կրթական ծրագրով նախատեսված վերջնարդյունքների ապահովումը,
- պրակտիկայի ծրագրում ունենալ ծրագրի իրականացման նախնական ֆինանսական հաշվարկ:

Արտադրական (մանկավարժական) պրակտիկաները կազմակերպվել են մանկավարժի որակավորում ունեցող «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերով (առաջին կիսամյակում նաև մանկավարժի լրացուցիչ որակավորմամբ): Պայմանագրային դպրոցները (Իջևանի թիվ 1 հիմնական դպրոց, Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց և Իջևանի թիվ 5 հիմնական դպրոց) աջակցել են մասնաճյուղի ուսանողներին, մանկավարժական կարողություններ ձևավորելու, հմտություններ ձեռք բերելու գործում: Ընթացքին իրազեկ լինելու համար բաժնի կողմից իրականացվել են վերահսկողական աշխատանքներ՝ դպրոց կատարվող այցելությունների միջոցով:

Պրակտիկայի վայրում ուսանողների կողմից ձեռք բերված գործնական գիտելիքներն ու կատարած աշխատանքներն արտահայտվել են թղթապանակներում, որոնք ներկայացվել և քննարկվել են ստուգարքին: Մանկավարժական պրակտիկայից բոլոր ուսանողները ստացել են «ստուգված»:

Պրակտիկայի ավարտին պրակտիկայի բաժնի կողմից մշակված հարցաթերթիկների միջոցով կատարվել է արտաքին շահակիցների հարցում: Հարցմանը մասնակցել են պրակտիկայի շրջանակներում ընդգրկված դասարանների դասվարները և ուսուցիչները:

Առաջին կիսամյակի ընթացքում հարցումը կազմակերպվել է առկա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողների համար: Գնահատվել է ուսանողների **94%-ը**:

Հավելված 1





ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելու կարողությունը,
2. տիրապետելը ժամանակակից մեթոդներին,
3. պատասխանատվությունը աշխատանքի նկատմամբ,
4. խմբային աշխատանքներ կազմակերպելու կարողությունը,
5. սեփական կարծիքը հայտնելու համարձակությունը,
6. ստեղծագործական մոտեցումը,
7. երեխաների հետ շփվելու կարողությունը:

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

– անընդհատ կատարելագործել մասնագիտական գիտելիքները,

- զբաղվեն ինքնակրթությամբ,
- լսել փորձառու ուսուցիչների խորհուրդները։

Մանկավարժական պրակտիկայի մասնաճյուղի կողմից կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է 4.7:

Երկրորդ կիսամյակի ընթացքում հարցումը կազմակերպվել է առկա ուսուցման «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 3-րդ, 4-րդ կուրսերի և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների համար:

Գնահատվել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողների **96%-ը։**

Հավելված 1


մանկավարժական պրակտիկա մոդուլ - 4
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր
էթիկայի նորմերին և ներքին կարգապահական կանոններին հետևելը
4.9
աշխատանքի նկատմամբ պատասխանատվությունը և մանկավարժական հմտությունները կատարելագործելու կարողությունը
4.8
սեփական արդյունքների վերաբերյալ դատողություններ անելու՝ տվյալներ հավաքագրելու, վերլուծելու և մեկնաբանելու կարողությունը
4.6
երեխաների հետ շփվելու, նրանց հետ փոխհարաբերություններ ստեղծելու կարողությունը
4.9
տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու կարողությունը
4.7
պրոբլեմային իրադրություններում (եթե այդպիսիք եղել են) լուծման եղանակներ ու միջոցներ առաջադրելու կարողությունը
4.4
սեփական մտքերը պարզ և հստակ արտահայտելու կարողությունը
4.8
աշակերտների ուշադրությունը կառավարելու կարողությունը
4.7
դասապրոցեսում ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունը
4.7
գործունեությանը առնչվող տեղեկատվությունը, փաստարկները, գաղափարները և խնդիրները (և դրանց լուծումները) մատչելի ներկայացնելու և բացատրելու կարողությունը
4.6
դասարանում որպես ուսուցիչ իր աշխատանքը կազմակերպելու կարողությունը
4.8
դասը պլանավորելու կարողությունը
4.7
մասնագիտական գիտելիքների տեսական իմացությունը (ազատ տիրապետում է նյութին)
4.7

Հավելված 1

ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. պրակտիկանտ- ուսանողը կոմպետենտ է՝ օժտված մասնագիտական և անձնային որակներով,
2. կիրառում է նորարական մեթոդներ և մեթոդական հնարներ, ունի հարուստ բառապաշար, անկաշկանդ խոսք,
3. կրթական հաղորդակցման կարողությունների կիրառում, աշխատանքը կազմակերպելու կարողությունների կիրառում,
4. դասարանի կառավարում, սեփական մտքերն արտահայտելու, նորարար գաղափարներ դասապրոցես բերելու հմտություն, ժամանակի կառավարում,
5. սիրում է երեխաներին, պատասխանատու է իր ընտրած մասնագիտության նկատմամբ,
6. սիրում է իր մասնագիտությունը, նվիրված է իր աշխատանքին, սիրում է երեխաներին,
7. պատրաստակամ է և համարձակ:

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. զբաղվել ինքնակրթությամբ, շատ ընթերցել, ձևավորել ստեղծագործական կարողություններ և հմտություններ,
2. կատարել գործնական սեմինարներ,
3. մասնագիտական գիտելիքները տեղափոխել կիրառելիության դաշտ՝ զարգացնել գործնական կարողությունները,
4. ուսուցիչների հետ կատարել համատեղ աշխատանք, լսել փորձառու ուսուցիչներին,
5. շարունակ փնտրել նոր միջոցներ ու մեթոդներ:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի մասնաճյուղի կողմից կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է **4.7**: Պրակտիկայի կազմակերպման գործընթացը բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. նախապես ծանոթացնել հանրակրթական չափորոշիչներին, ծրագրերին, գործող դասագրքերին,
2. հաճախակի դարձնել պրակտիկայի համապատասխան մասնագետների մասնակցությունը:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրերի 3-րդ կուրսի հարցման արդյունքներով գնահատվել է ուսանողների **100%-ը**:

Հավելված 1

ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի դասվարները նշել են.

1. տեսականորեն ծանոթ են դասի ընթացքում կիրառվող մեթոդներին,
2. ունեն կարողություններ և հմտություններ, քննարկում և մեկնաբանում են մանկավարժների գործունեությունը,
3. օգտվում են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից,
4. ունեն պատասխանատվություն աշխատանքի նկատմամբ,
5. սիրում են աշակերտներին, դպրոցական կյանքը,
6. ունեն նորը սովորելու պատրաստակամություն,
7. ուսուցիչների հետ ունեն սերտ համագործակցություն:

Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ կատարված առաջարկներն են.

1. նախապես ծանոթ լինել դասագրքերին և ծրագրերին,
2. ուշադրություն դարձնել դասի կառուցվածքին,
3. զարգացնել ստեղծագործական միտքը,
4. բարելավել գործական հմտությունները,

Հավելված 1

5. դասաժամերի քննարկումներում հաճախակի դարձնել պրակտիկայի համապատասխան մասնագետների մասնակցությունը:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի մասնաճյուղի կողմից կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է 4.3: Պրակտիկայի կազմակերպման գործընթացը բարելավելու վերաբերյալ առաջարկվել է դասաժամերի քննարկումներում հաճախակի դարձնել պրակտիկայի համապատասխան մասնագետների մասնակցությունը:



ԵՊՀ ԻՄ ուսանողների համար որպես առավելություն դպրոցի ուսուցիչները նշել են պարտաճանաչությունը և աշխատասիրությունը: Պրակտիկանտ ուսանողների մասնագիտական հմտությունները բարելավելու վերաբերյալ նշումներ չեն կատարվել:

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի մասնաճյուղի կողմից կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է 5: Պրակտիկայի կազմակերպման գործընթացը բարելավելու վերաբերյալ առաջարկվել է դասաժամերի քննարկումներում հաճախակի դարձնել պրակտիկայի համապատասխան մասնագետների մասնակցությունը:

Հավելված 1



2021-2022 ուսումնական տարվա ընթացքում արտադրական (մանկավարժական) պրակտիկաների արդյունքների ամփոփմամբ բոլոր ուսանողները ստացել են «ստուգված»: Պրակտիկաների կազմակերպման համար մասնաճյուղի կողմից դպրոցներին կատարվել է վճարում՝ համաձայն դպրոցների հետ կնքված պայմանագրի:

Հեռակա ուսուցման մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվել է Տավուշի մարզի 11 դպրոցներում (հաշվի է առնվել բնակության վայրը): Ուսանողներն իրենց աշխատանքներն իրականացրել են հետևելով ղեկավարների կողմից տրվող հանձնարարություններին: Գիտամանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփմամբ ևս բոլոր ուսանողները ստացել են «ստուգված»:

Մասնագիտական պրակտիկաները կազմակերպվել են խմբային և ոչ խմբային եղանակներով: Խմբային եղանակով կազմակերպվել են առկա ուսուցման «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսում, «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Պատմություն» և «Դիզայն» կրթական ծրագրերի 4-րդ, հեռակա ուսուցման «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» 5-րդ կուրսերում (ԵՊՀ ԻՄ, «Հույսի կամուրջ» ՀԿ, Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն), մնացած կուրսերում պրակտիկաները կազմակերպվել են տարբեր հիմնարկություններում՝ համաձայն պրակտիկայի ղեկավարների կողմից պրակտիկայի բաժին ներկայացված հաստատությունների ցանկի: Դրանք ընդգրկել են հյուրանոցառեստորանային համալիրներ, համայնքապետարաններ, մարզպետարան, ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ-ում գործող բանկերի Տավուշի մասնաճյուղեր և այլն: Բաժնի կողմից պատրաստվել է 68 գրություն: Պրակտիկայի ընթացքում մասնագիտական ամբիոնի կողմից նշանակված ղեկավարներն ուսանողների հետ աշխատանքները կազմակերպել են առկա և առցանց եղանակներով:

Պրակտիկայի ժամանակահատվածում ծրագրային պահանջներին համապատասխան կատարած աշխատանքները ուսանողները ներկայացրել են սահմանված ժամկետներում և ստուգարքը ստացել ստուգված: Հաշվետվությունները ներկայացվել են բուհի կողմից սահմանված ձևաչափով (պրակտիկայի օրագրեր) և ամբիոնի կողմից առաջադրված պահանջով (բաց հաշվետվություն):

Պրակտիկայի ավարտին կատարվել է ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների հարցում:

Առաջին կիսամյակի ընթացքում հարցումը կազմակերպվել է առկա ուսուցման «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների համար: Գնահատվել է ուսանողների **100%-ը**:

Հավելված 1





Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են.

1. զարգացման տարբեր խանգարումներ ունեցող երեխաների վերաբերյալ խորը գիտելիքների իմացություն,
2. կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքի մեթոդների իմացություն,
3. երեխաների հետ աշխատելու հմտություններ:

Մանկավարժական պրակտիկայի մասնաճյուղի կողմից կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է 5: Գործընթացը բարելավելու համար առաջարկվել է կազմակերպել ուսանողների համար ընթացիկ այցեր պրակտիկայի ժամկետից դուրս, ողջ կիսամյակի ընթացքում:

Երկրորդ կիսամյակի հարցման ընթացքում ևս գնահատվել է «Հոգեբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների **100%-ը**:

Հավելված 1



Պրակտիկան բարելավելու վերաբերյալ արտաքին շահակիցի կողմից առաջարկ չի կատարվել: Մասնագիտական պրակտիկայի կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է **5**:

«Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրերի 4-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **100%-ը**:



Վերոնշյալ հարցադրումներից բացի ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար հարցին ի պատասխան նշվել է *թիմում և մեծ խմբերում աշխատելու ունակություն*: Պրակտիկան բարելավելու վերաբերյալ առաջարկվել է *նախքան պրակտիկան ուսանողներին ներգրավել Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոնի գործունեությանը*:

Մասնագիտական պրակտիկայի կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է **5**: Պրակտիկայի ղեկավարի կողից առաջարկվել է *ընդլայնել գործընկեր կազմակերպությունների ցանկը*:

«Պատմություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի մասնագիտական պրակտիկան կազմակերպվել է Վիքիմեդիա Հայաստան կազմակերպության հետ ունեցած համագործակցության շրջանակներում: Ուսանողները սովորել են Վիքիպեդիայի հոդվածի օրինակով հոդված գրելու կանոնները, 8-ժամյա վերապատրաստումների միջոցով ծանոթացել Վիքիպահեստի և Վիքիդատայի կապին, ուսումնասիրել Վիքիպեդիայի հոդվածի կառուցվածքը, դրա ենթավերնագրերը և ներքին հղումները, սովորել են հոդվածի ծանոթագրություններն ու տեղաքարտը դնելը, արտաքին հղումներ, հոդվածում նկար տեղադրել, կատեգորիաներ և միջլեզվային հղումներ ավելացնելը: Պրակտիկայի ընթացքում յուրաքանչյուր ուսանող պատրաստել և Վիքիպեդիայում տեղադրել է 7-ական հոդված:

Հավելված 1



Վիքիմեդիա Հայաստան կազմակերպության հետ համագործակցության շրջանակներում պրակտիկայի կազմակերպումը ուսանողների կողմից գնահատվել է արդյունավետ:

«Զբոսաշրջություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **100%-ը**:

Հավելված 1



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են՝ *արագ կողմնորոշում և հաղորդակցման հմտություններ: ԵՊՀ Իմ-ի կողմից ճիշտ են ընտրված բոլոր այն պահանջները որոնց պետք է տիրապետի ուսանողը:* Պրակտիկան բարելավելու վերաբերյալ առաջարկվել է *ավելի շատ գործնական աշխատանքներ իրականացնել ոլորտի ձեռնարկություններում*:

Մասնագիտական պրակտիկայի կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է **5**:

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **90%-ը**: Վեցից երեք ուսանող (50%-ը) պրակտիկայի վայր հանդիսացող հաստատություններից ստացել է աշխատանքի առաջարկ:

Հավելված 1



Ինչպիսի այլ որակներ են անհրաժեշտ տվյալ ոլորտում աշխատելու համար արտաքին շահակիցները նշել են, որ *հարցերը բավարար են և որակների այլ բացահայտումների կարիք չկա, լավ կլիներ ուսանողների մոտ զարգացնել նաև բանակցելու և վաճառքի հմտություններ: Ուսանողներն ունեն բավարար տեսական գիտելիքներ, որոնք ղեկավարի ուղորդմամբ արագ վեր են ածվում գործնական հմտությունների: Քանի որ կազմակերպությունները մեծամասամբ ՀՀ բանկերի մասնաճյուղեր են, պրակտիկայի ընթացքում ուսանողների մասնակցությունը տարբեր գործառույթներում սահմանափակ է, սակայն աշխատանքի անցնելով նրանք կարող են արագ կողմնորոշվել և կիրառել ձևավորած հմտությունները: Ուսանողներն ունեն թիմում աշխատելու և միջանձնային հարաբերություններ ձևավորելու կարողություններ:* Պրակտիկան բարելավելու վերաբերյալ հարցմանը ի պատասխան նշվել է, *որ պրակտիկան կազմակերպված է բարձր մակարդակով և ծավալուն, ուսանողն ունի համապատասխան գիտելիքներ և պրակտիկան իրականացնում է արժանվույն:* Ղեկավարներից շատերը նշել են, որ պրակտիկանտի հետ *համագործակցությունը եղել է արդյունավետ,* շնորհակալ են մասնաճյուղին, նման ուսանողներ պատրաստելու համար *(Իջևանի գինու և կոնյակի գործարանում պրակտիկա իրականացրած ուսանողների կողմից նույնիսկ առաջարկվել են նորարարական մտքեր, որոնք հաստատությանը պետք կգան աշխատանքի կազմակերպումը հեշտացնելու համար)*: Արդյունքում 10 ուսանողից 7-ը (70%-ը) ստացել է աշխատանքի առաջարկ:

Մասնագիտական պրակտիկայի կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է **5**:

Հավելված 1

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» կրթական ծրագրի 3-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **94%-ը**:



Մասնագիտական պրակտիկայի կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է 4.3: Գործընթացը բարելավելու համար առաջարկվել է պրակտիկայի ընթացքում կազմակերպել կազմակերպության և ամբիոնի կողմից նշանակված ղեկավարների և պրակտիկանտի համատեղ հանդիպում՝ քննարկելու պրակտիկայի ընթացքը, պրակտիկայից առաջ ուսանողներին ծանոթացնել տեսական նյութի հետ:

Ուսանողների կողմից առաջարկվել է շաբաթական մեկ օր հաճախականության փոխարեն սահմանել 10 օր անընդմեջ պրակտիկա, *Բանկային գործ* առարկան ուսուցանել I-ին կիսամյակում:

«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի 4-րդ կուրսի հարցման արդյունքնում գնահատվել է ուսանողների **52%-ը**:

Հավելված 1



Մասնագիտական պրակտիկայի կազմակերպման գործընթացի միջին գնահատականը կազմել է **4**: Գործընթացը բարելավելու համար «Վեկտոր» ՓԲԸ-ի կողմից առաջարկվել է Web ծրագրավորում առարկան համալսարանում իրականացնել պրակտիկայից առաջ, քանի որ հաստատությունում աշխատանքները կատարվում են Web ծրագրավորման բնագավառում:

Ուսանողների կողմից առաջարկվել են.

1. Web ծրագրավորում առարկան սովորեցնել 3-րդ կուրսում
2. պրակտիկայի անցկացման ոլորտ ընտրել նաև ՏՀՏ-ից
3. հնարավորություն ընձեռնել պրակտիկա անցնելու նաև ՀՀ բանկերում, ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում:

Դիզայն 4-րդ կուրսի մասնագիտական պրակտիկան իրականացվել է մասնաճյուղում և Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության համակարգչային սրահում: Պրակտիկայի ծրագրով նախատեսված է եղել իրականացնել նախագծային աշխատանքներ, իրականացնել հետազոտական աշխատանք և հիմնավորել նախագծի գործնական նշանակությունը:

Մասնագիտական պրակտիկայի շրջանակներում ուսանողները ճանաչողական այց են կատարել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան ծանոթանալու դիզայնի ֆակուլտետում իրականացվող ավարտական աշխատանքներին, քննարկելու իրենց կողմից կատարված նախագծերը, եղել Tumo studios-ում՝ ծանոթանալու ստուդիայի գործունեությանը, քննարկելու դիզայնի զարգացման հիմնական միտումները: Պրակտիկայի ավարտին պրակտիկայի կազմակերպման գործընթացը բարելավելու համար ուսանողների և ղեկավարի

կողմից առաջարկվել է պրակտիկայի ընթացքում ակտիվացնել շփումը արվեստանոցների, շինհրապարակների և նույն ոլորտի այլ բուհերի ու մասնագետների հետ։

2021-2022 ուսումնական տարվա ընթացքում մասնագիտական պրակտիկաների արդյունքների ամփոփմամբ մեկ ուսանող ստացել է «չստուգված» և կարգի համաձայն առաջին կիսամյակում հեռացվել մասնաճյուղից։ Տարբերություն է հանձնել հեռակա ուսուցման «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագրի 1 ուսանող։

Ընդհանուր առմամբ 2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում պրակտիկա է կազմակերպվել **515** ուսանողի համար (առկա ուսուցում՝ 269 ուսանող, հեռակա ուսուցում՝ 246), որից հեռացվել է 1 ուսանող, ադեմիական պարտք կուտակել 4 ուսանող։